

## Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի  
հանրապետական փուլի – 2016թ. /տևողությունը՝ 150 րոպե/  
10-րդ դասարան

1. Թվարկել աշխարհագրական մտածողության չորս հիմնական հատկանիշները  
և աշխարհագրական գիտության լեզվի չորս բաղադրիչները (առանց մեկնաբանության).....2 միավոր
2. Ի՞նչ է պետական տարածքը, որո՞նք են նրա բաղադրիչները (առանց մեկնաբանության).....1 միավոր
3. Ի՞նչ է մագնիսական հսկումը: Այնքանի՞ տիպի կարող է լինել (առանց մեկնաբանության).....1 միավոր
4. Լեռանգագաթին մթնոլորտային ճնշումը 340 մմ է, օդի ջերմաստիճանը՝ - 6°C,  
իսկ ստորոտին՝ +12°C (հաշվարկը կատարել 5°C -ով).....2միավոր
  1. Որոշել լեռան հարաբերական բարձրությունը,
  2. Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտին:
5. Որքա՞ն էլեկտրաէներգիա (կվտ/ժամ) կարելի է ստանալ 2 տոննա նավթի այրումից  
(ջերմային գործակիցը՝ 1,5).....1 միավոր
6. Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը հեկտարով, եթե նրա համախառն  
բերքը կազմում է 24 հազ. տոննա, իսկ միջին բերքատվությունը՝ 25 գ/հա.....1 միավոր
7. Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ տրված պնդումներից  
որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
  - 1) Մայրցամաքների և կղզիների ավերը ողողող միասնական  
ընդարձակ տարածքը կոչվում է ծով:
  - 2) Օվկիանոսում 200-2500 մ խորություններն անվանում են  
օվկիանոսի հատակ:
  - 3) Քաղցրահամ ջուրը սառչում է 0°C-ում, իսկ օվկիանոսի  
աղի ջուրը՝ -1-2°C-ում:
  - 4) Օվկիանոսի ջրի մեծ աղիությունը պայմանավորված է  
փոքր գոլորշացումով, մթնոլորտային առատ  
տեղումներով և գետերի բերած քաղցրահամ ջրի մեծ քանակով:
  - 5) Կորալյան (օրգանական) ծագման կղզիներն առաջացել  
են բույսերի փտումից, նեխումից:
  - 6) Համաշխարհային օվկիանոսի խորությունը չափում  
են էխոլոտ (ձայնային խորաչափ) կոչվող սարքով:
8. Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
  - 1) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկիր է:
  - 2) ՀՆԱ-ի մեծ մասը բաժին է ընկնում սպասարկման ոլորտի ճյուղերին:
  - 3) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
  - 4) Արտահանման մեջ գերակշռում են մեքենաները և սարքավորումները:
  - 5) Ցածր է կյանքի միջին տևողությունը:
  - 6) Բեռնաշրջանառության մեջ մեծ է խողովակաշարային  
տրանսպորտի բաժինը:
9. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում.....1 միավոր
  - 1) օբսիդիան
  - 2) կրաքար
  - 3) կավ
  - 4) կերակրիաղ
  - 5) ավազ
  - 6) խճաքար
  - 7) մարմար
  - 8) խարամ:

10. Գրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի Սև ծով.....1 միավոր
- |              |              |
|--------------|--------------|
| 1) Հունաստան | 5) Բուլղարիա |
| 2) Թուրքիա   | 6) Ռումինիա  |
| 3) Մոլդովա   | 7) Ադրբեջան  |
| 4) Մլովենիա  | 8) Ուկրաինա: |
11. Թվարկե՛լ պալեոգոյան դարաշրջանի վերջին չորս ժամանակաշրջանները.....1միավոր
12. Թվարկե՛լ Բելգիային սահմանակից (ցամաքային) երկրները.....1միավոր
13. Ի՞նչ գործոններ են ազդում բնակչության սեռային կազմի վրա (թվարկել առանց բացատրության).....1 միավոր
14. Արեգակնային համակարգի և Երկիր մոլորակի առաջացման մասին ինչ հայտնի գիտաենթադրություններ գիտե՛ք:  
Թվարկե՛ք դրանք և նշե՛ք հեղինակը (ները).....2 միավոր
15. Ի՞նչ են աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (ԱՏՀ, GIS): Ինչի՞ց են բաղկացած և ի՞նչ նպատակով են ստեղծված.....2 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա.Թ. Գրիգորյան

